Այսպիսի գանգատներով լի են ժամանակի յիշատակարանները, որոնցից իմանում ենք, որ սովը, կոտորածը, բռնի կրօնափոխութիւնը, սրբութիւնների պղծումը, վանքերի և եկեղեցիների կողոպտումն և աւերումը, մորեխը, մահտարաժամը, հալածանքն և այլն միմեանց հետ դաշնակից էին եղել մարդկային չարութեան ամէն նրբութիւններն յերևան հանելու և մի խեղճ հարստահարուած ազգ ոչնչացնելու։ Եւ այդ է պատճառը, որ Զաքարիա կաթուղիկոսի յաջողութիւնը շատ և այնքան շատ ուրախացնում և մխիթարում էր ժողովրդին։ Այս հանգամանքի մէջ ոչ պակաս աչքի է ընկնում նոյն իսկ Զաքարիայի անձնաւորութիւնը, յիշատակարանները նորան ներկայացնում են իբրև ժիր, գործունեայ, քաղաքագէտ, ժողովրդի և եկեղեցու շահերին հաւատարիմ և անձնուէր մարդ, որն, ինչպէս ասում են թերևս չափազանցութեամբ, նաև տոհմական ազնուութիւն ունի, լինելով Արծրունեաց Գագիկ թագաւորի տանից, Զահանշահի և Բաղիշու ամիրայի մէջ ծագած գժտութեան և կռիւների ժամանակ Զաքարիա կաթուղիկոսի սիրտը չդիմացաւ, տեսնելով Բաղիշու անմեղ ժողովրդի կրած հարուածները և «զտապալումն սրբոց սեղանացն, զգերեվարելն սրբութեանց և զխափանումն փառաբանութեանցն Աստուծոյ և զտարաշխարհիկ լինելն ամենայն խառնիճաղանճ ժողովրդեան՝ զգերելն և զտատանելն»